

1869 թ. ապրիլին եւ նա մանաւանդ տեսուչ Գէորգ Քանանեանի եռանդին, ինչպէս եւ ազգեցիկ աջակցութեան ձեւարանի նոր Գլխաւոր Կառավարչապետ եւ միաժամանակ Ժողովրդ. Լուսաւորութեան նախարար կոմս Գեմետրի Անդրէեւիչ Տալստոյի⁷ ձեւարանի եւ արեւելադիտութեան ճակատագիրը որոշուեց ամենարարեյաջող կերպով:

«Կոմս Տոլստոյը, լսելով Գ. Քանանեանի զեկոյցը, պատրաստուած ձեւարանի Խորհուրդի կողմից, մեծ համակրանքով վերաբերուեց արեւելեան լեզուների դասուանդութեան եւ ձեւարանի իրաւունքների վերանորոգման խնդրին: Արդիւնքը եղաւ այն, որ համաձայն Կոմս Տոլստոյի այդ խմաստով յարուցած բարեխօսութեան 1870 թ. Մայիս 30ին Կայսեր բարձրագոյն հրամանը եղաւ՝ «Քոնգրեսը Լազարեան ձեւարանում Մասնագիտական դասարանները»⁸:

Բայց Գլխաւոր Կառավարչապետը այդքանով էլ չբաւականացաւ. նա ձեւարանի շահերը այնքան իր սրտին մօտ էր առել, որ իր աշխատանքները առաջ տարաւ, որպէս զի միանգամ ընդ միշտ ձեւարանի թէ կրթական ծրագիրն եւ թէ իրաւական վիճակը հաստատուն հիմքերի վրայ դնի:

Կոմսը ժամանում է Մոսկուա 1870 թ. Օգոստոս 21ին. երկու օր նուիրում է ձեւարանի ծանօթութեան շինքի եւ ապա ձեւարանի պատմութեան հետ կապուած բոլոր փաստաթղթերի մանրամասն եւ ուշադիր ուսումնասիրութեան: Օգոստոս 25ին նա հրաւիրում է Ժողովի ձեւարանի վերատեսչին, տեսչին, պրոֆեսորներին եւ դասատուներին. լսում է ամէնքի կարծիքը եւ այնուհետեւ մշակում է ձեւարանի համար նոր դպրոցական Ծրագիր ու Կանոնագիր, որն այնուհետեւ 1871 թ. հաստատուում է բարձրագոյն հրամանագրով: 1870 թ. Հոկտեմբերին բացւում են Մասնագիտական դասարանները նոր հիմունքներով:

«Նոր Կանոնագրի գործադրութիւնը, — ասում է Գ. Քանանեանը — թողեց ամենուրեք շատ միջիթարական եւ ուրախալի տպաւորութիւն. չորս կողմից ստացուեցին ողջոյնի արտայայտութիւններ, որոնց թւում

⁷ Գլխաւոր Կառավարչապետի պաշտօնը կոմս Տոլստոյը, համաձայն Հոգարարձուի խնդրանքին, ընդունեց 1870 թ. Մայիսին:
⁸ Տե՛ս «Լ. Ճ. Լիւկանի 30ամեակը», էջ 1—Ժ:

նաեւ ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Գ. ից⁹»:

Այդ տպաւորութեան տակ Հայ համայնքները ցանկութիւն են յայտնում դնել ձեւարանի Հարցաքննութեան շքեղ դահլիճում (АКТОВАЯ ЗАЛА) ձեւարանի Հոգարարձուի՝ Խաչատուր Լազարեանի մարմարէ կիսանդրին հանգանակուած գումարով, որն եւ իրագործում են 1870 թուին:

Լազարեան ձեւարանի առաջին 50ամեակի համառօտ տեսութիւնը, նրա ապրած զարգացման փուլերի հակիրճ նկարագրութիւնը, որն ստիպուած եղանք հասցնել մինչեւ 1871 թ., որպէս զի ամբողջացրած լինենք ընդհանուր պատկերը, եղբայրակում ենք Գ. Քանանեանի խօսքով, ասուած ձեւարանի 50ամեակի հանդիսաւոր հաւաքոյթին՝ 1865 թ. Սեպտեմբեր 12ին:

— «Մենք տեսնում ենք, որ անթիւ էին Լազարեան տոհմի մատուցած ծառայութիւնները ձեւարանին. այդ տոհմի անդամները ո՛չ միայն ստեղծեցին մի մեծ հաստատութիւն յօգուտ ամբողջ հասարակութեան, այլ եւ պահպանեցին այն ամբողջ 50 տարուայ ընթացքում: Միաժամանակ մենք չենք կարող լուրթեամբ անցնել այն անձանց բերած ծառայութիւնները, որոնք մեծապէս նպաստեցին մեր դպրոցի ներքին կեանքի զարգացման:

«Հիմնադիրների միտքը դարձնել իրենց հաստատութիւնը իրենց հայրենակիցների բարոյական ու մտաւոր վերածնութեան վայր, պահանջում էր միջոցներ, որոնցից զրկուած էր հայ ազգը, որ քաղաքական ճակատագրի քմայքով կտրուած էր հին ժամանակներում ունեցած իր հարուստ մտաւոր գանձերից: Պէտք էր նորից ստեղծել այդ միջոցները, այդ ուսումնական գործիքները, սովորելու իրենց մայրենի լեզուն ու կրօնը: Ծանր ու դժուարին էր պարտականութիւնը այն անձանց, որոնց վստահացել էին Լազարեան ձեւարանի առաջին սաների կրթութիւնը՝ սովորեցնելու նրանց իրենց մայրենի լեզուն եւ իրենց նախահայրերի հաւատքը: Բայց այդ դժուարութիւնը յաղթահարուած էր գործունէութեամբ ու ջանքերով այն անձանց, որոնք բերին իրենց տաղանդն ու ջանքերը ձեւարանի

⁹ Տե՛ս «Լազ. ձեւ. 75ամեակը», էջ 44:

րանի յառաջադիմութեան գործին: Խօսելով այդ անձանց մասին, մենք չենք կարող չլիշատակել դոնէ մի քանիսներին՝ Սալլանթեանին, Էմինին, Մսերեանցին ու Նազարեանցին: Էմինի հեռուոր Հնդկաստանից դաշն արդէն ապացոյց էր, որ վաղ ժամանակներից սկսած ձեւարանը իրեն ձգող մի ոյժ էր: ձեւարանում ստանալով իր կրթութիւնը, Պ. Էմինը լիովին հատուցեց իր բարոյական պարտքը իր alma mater-ին: Նա ձեւարանի սաների ձեռքը տուեց դպրոցական ձեռնարկներ իւրացնելու դրաբարն ու Հայոց հին գրականութիւնը, իսկ ուսուցիչական նա նուիրարեց հայկական դպրոցական եւ պատմութեան յիշատակարանների թարգմանութիւնները: Երախտագիտական խօսք ունինք ստելու նաեւ գիտնական արքեպիսկոպոս Սալլանթեանին, Պ. Մսերեանցին եւ Պն. Նազարեանցին իրենց աշխատանքների ու գործունէութեան համար: Սրանցից իւրաքանչիւրը բարեխոյճօրէն եւ ազնուօրէն բերել է իր աշխատանքը յօգուտ այն գործի, որը մատնանշուած է եղել Հիմնադրի կողմից:

«Մի չափազանց ուշագրաւ եւ համակրելի երեւոյթ եւս նկատուած է Լազարեան ձեւարանի ամբողջ կէս տարուայ կեանքի մէջ:

«Սակաւ չեն դէպքերը, երբ մի հիմնադրութիւն, որի մէջ համախմբուած են լինում այլացեղ եւ այլակրօն տարրեր, արհամարհելով նրա վեհ կոչումը, դատնում է ասպարէզ կրօնական ու ցեղային կոըստաբեր հակամարտութեան: Հազիւ թէ գտնուի մի այլ հիմնադրութիւն նոյն չափով, ինչ չափով Լազարեան ձեւարանն է եղել ազատ ու մաքուր այդ սկզբունքներից: Ազնիւ ծառայութիւնը դաստիարակութեան վսեմ գործին երբեք չի մթաղնուել որ եւ է կողմնակի ձգտումների խառնուրդով: Այն անձինք, որոնք կանգնած էին մեր դպրոցի գլուխը, ինչպէս եւ նրանք, որոնք ղեկավարել են երիտասարդութեան դաստիարակութեան ու կրթութեան գործը, հաւասարապէս պարզ ու յստակ կերպով ըմբռնել են իրենց պարտականութիւնների վեհութիւնը եւ խանդավառուած ազնիւ քաղաքացու եւ ազնիւ դաստիարակի ոգով, ներշնչել են նոյնը իրենց աշակերտներին: ձեւարանի տարեգրութեան մէջ չի կարելի մատնանշել նոյն իսկ մի դէպք, որը այդ խմաստով մի մութ բիծ գրոշմէր նրա գոր-

ծիչների անուան վրայ: ձեւարանի բազմաթիւ այլակրօն սաները միշտ կապուած են եղել միմիանց հետ, որպէս մի ընտանիքի զաւակներ: Նրանց սրտերում խորապէս արմատացել էր մի գիտակցութիւն, որ նրանք եղբայրակիցներ են եւ զաւակներ մի մեծ երկրի: Իր յիսունամեայ կեանքը բոլորելով, Լազարեան ձեւարանը կարող է պարծանքով թուել, որ նրա ծոցում սնուել են, մեծացել եւ այդ զգացումների մէջ ամբացել հազարից (1000) աւելի սաներ¹⁰. այլազան կրօնների, այլազան ծագումով, որոնք այսօր ցրուած են լայնատարած Ռուսաստանի բոլոր ծայրերում եւ որոնք ծառայել ու ծառայում են նրան, նուիրելով իրենց մտաւոր ու բարոյական ոյժերը: Ծատերը նրանցից իրենց վաստակով ու շնորհքներով դարձել են արժանաւոր քաղաքացիներ, նրանք ամէնքը զանազան ասպարէզներում եւ հասարակական գործունէութեան զանազան աստիճաններում, պատկանում են պետութեան օգտաւէտ ու ազնիւ ծառայողների շարքին»:

(Շարունակելի:)

ՊԵՏԱՐԱԾԻՆ ԿՆՑ ՄՁԵԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն:)

ՍՍ.ԲԼԶ.-ԱՂԱՃ (Բերա)

Բերայի վերաբերեալ թողեքէն Սաքր-Աղանի մէջ կազմուած քանի մը Ընկերութիւններ Բերայի տակ յիշած ենք արդէն:

1. ԱՆԱՐԱՏ ԵՂՈՒԹԵԱՆ ՆԱԵԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՇԻՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՆՆԵՐՈՒ (1916)

Սաքր-Աղանի Հայ Կաթ. Անարատ Յղութեան Մայրապետներու վարժարանին նախկին աշակերտուհիներու նախաձեռնութեամբ եւ Սարուխանեան Յովսէփ Վրդ.ի օժանդակութեամբ 1916ին կը հիմնուի «Անարատ Յղութեան Նախկին Աշակերտուհիներու Ընկերութիւնը», որուն նպատակն է՝ շատոնց գոյութիւն ունեցող Հայ Կաթողիկէներու «Ս. Աննա Որբանոց»ի աշակերտներու սնունդը հոգալ:

¹⁰ Իրօք՝ 1128 հոգի:

Ընկերութեան առաջին տարիներու գործունէութիւնը, Վարչական կազմը, անդամներու թիւը, եւ այլն, անձանօթ են մեզ: Չենք զիտեր նաեւ թէ Կանոնադիր ունեցած է:

Ընկերութեան 1918ի մուտքն եղած է 87-154 դրուշ, իսկ եւրո՝ 74-040 դրուշ: 1919ին Ընկերութեան Վարչութիւնը կը կազմէին հետեւեալ Օրիորդները. Մարի Ալիքեան, Հոփսիմէ Կոթօրեան, Թերէզ Տաւեան, Վերժին Ղարիպեան, Սրբուհի Ճէնտէնէճեան, Մարի Թօփալեան, Շաքէ Չիլինկիրեան, Արմաւիր Ալեմազ, Աղանի Սրապեան (Ժամանակ, Կ. Պ. 1919, Թ. 3439):

ԹԱՔՍԻՄ (Բերս)

1. ՀԱՅ ԳՐԱՇԱՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Ընկերութիւնս կազմուած է 1919 Յունուարի սկիզբը եւ նախ կոչուած է «Հայ Գրաշարական Միութիւն», իր ժողովները գումարելով Թաքսիմի «Հաշտութիւն» գարեջրատան վերնայարկը (Ժամանակ, 1919, Թ. 3424): 1919 Յունիսի Ընդհ. ժողովքէն կ'անուանուի «Տպարանական Բանուորական Միութիւն» (Անդ՝ Թ. 3575): Իսկ 1919 Օգոստոսին սկիզբը վերջնականապէս կը ստանայ «Տպարանական Հայ Բանուորներու Միութիւն» յորջորջումը (Անդ՝ Թ. 3587):

Իր Դիւանը կազմուած էր հետեւեալներէ: Տիգրան Տօղրամաճեան (Ատենապետ), Միքայէլ Տէր-Սահակեան (Ատենադպիր), Մկրտիչ Նահապետեան (Գանձապետ), եւ այլն (Անդ՝ Թ. 3575): Ընկերութեան մուտքի տուրքն էր 20 դրուշ:

Ասով ճշգրտած եւ լրացուցած կ'ըլլանք Բերայի Թ. 87 Միութիւնը, որ հաւանօրէն այս Միութիւնն է եւ գոր ա՛յնքան անորոշ եւ անիմաստ ներկայացուցած են Թէոփիլի Ամէնուն Տարեցոյցի մէջ:

2. ԿԻՒԿԵՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՉՍԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1922)

Հաւանօրէն 1922ի սկիզբը հիմնուած՝ գաղթական հայ ուսուցիչներու միջեւ (Ժողովուրդի Չայքը, Կ. Պ. 1922, Թ. 1031):

ՊԵՇԻԿՍԻ

1. ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1859)

Արեւիլի մէջ¹ «Սկսնակ Բանասէր» կը գրէ. «Բաւական արդիւնաբեր եղաւ 1858ին Պէշիկթաշի մէջ կազմուած Ընկերութիւն մը, որուն նպատակն էր նախակիրքական գիրքեր տպել եւ աժան ծախել»: «Սկսնակ» յիշած այդ Ընկերութիւնը «Հայկազեան»ն է, բայց ո՛չ թէ 1858ին, այլ 1859 Յունուար 1ին հիմնուած է, ինչպէս կը ճշգրէ Երեւակ². «1859 թուին Յունուար 1էն Կոստանդնուպօլսի նեղուցին Պէշիկթաշ գիւղը Հայկազեան Ընկերութիւնը սկսած էր տպել Ընկերութիւնը»:

Հետեւարար սխալ է նաեւ Թորգոմեանի կարծիքը թէ 1861ին հիմնուած է Ընկերութիւնս³:

Հայկազեան Ընկերութեան առաջին յիշատակութիւնը Մէմուայը Հալապիս⁴ կ'ընէ, կոչելով զայն «Հայկազեան Ընկերութիւն», որ կը կոչուի նաեւ «Հայկազեան Ընկերութիւն»⁵ եւ յիշելով անոր հրատարակած «Նախագիտելիք Մանկանց» եւ «Նախնական դասագիրք թուադիտութեան» գրքերը:

1861ին Ընկերութիւնը իր երրորդ տարուան սկիզբը հաշուեցուցակ մը յոյս ընծայելով՝ կը ցուցնէ թէ արդէն 8 կտոր գիրք հրատարակած է «Ընթերցասիրութեան ազգիս մէջ ծաւալելուն հօգ օժանդակ մը ըլլալու յոյս տարով»⁶:

Երեւակ⁷ կը հրատարակէ Ընկերութեան Կանոնադիրը, որ 10 Յօդուածէ բաղկացած է: Տանք մէկ երկու ծանօթութիւն. Ընկերութեան հիմնադիրները — «Խորհրդական անդամներ» — 10 հոգի են եւ Ընկերութեան բոլոր հոգերը իրենց վրայ առած են (Կանոն Ա.). անդամավճարն է՝ տարին 20 դրուշ (Կանոն Բ.). ով որ մէկ անգամէն 200 դրուշ վճարէ՝ մշտնջենաւոր անդամ կ'ըլլայ (Կանոն Գ.). Ընկերութիւնը 10 տարի պիտի շարունակուի, եթէ գործը յաջող երթայ՝ դար-

¹ Կ. Պ. 1898, Թ. 3853:
² Կ. Պ. 1860, էջ 71:
³ Երեմիա Չէլչիլի Ստամպուլայ Պատմ., Բ., էջ 660:
⁴ Կ. Պ. 1860, Թ. 358:
⁵ Անդ՝ 1861, Թ. 396:
⁶ Մասիս, Կ. Պ. 1861, Թ. 517:
⁷ Անդ՝ էջ 72-74:

ձեալ 10 տարի պիտի շարունակէ, իսկ եթէ ոչ՝ իր գրքերն ու ստացուածքը աղքատ դպրոցներուն պիտի բաժնուին (Կանոն Զ.). Ընկերութիւնը պիտի տպէ տպագրութեան միջոց չունեցող գրագէտներու գործերը եւ եթէ կարենայ՝ պիտի վարձատրէ գանձք (Կանոն Է.). Ընկերութիւնը կը պարտաւորէ ինքզինքը՝ «բարոյականի եւ կրօնքի դէմ գիրք տպել չտալու» (Կանոն Ը.):

Ինչպէս կը տեսնուի՝ Պէշիկթաշի «Հայկազեան Ընկերութիւն»ը տիպար Հրատարակչական մեղած է ա՛յդքան հնութեան մէջ: Չկայ թերթ մը, որ գովեստ չընէ իր մասին: Չեփիւն⁸ համեմատելով հայ գոյնգոյն Ընկերութիւններու հետ, որոնք սունկի պէս բուսած ու անհետացած են, առանց կոկիկ հետք մը ձգելու՝ առաջին եւ լաւագոյն Ընկերութիւնը կը համարէ «Հայկազեան»ը, որ ամէն տարի իր հաշիւը կու տայ հրատարակիչ եւ չափազանց օգտակար կ'ըլլայ Ազգին, ոչ մէկ գանգատի եւ դժգոհութեան առիթ տալով: Չեփիւն կու տայ ցանկը մինչեւ 1863 Մարտ Ընկերութեան հրատարակած գրքերու, որոնք են. 1. Առաջնորդ հայ ընթերցանութեան կամ Նոր Գերական, 2. Պարտք սղայոց, 3. Նախագիտելիք Մանկանց, 4. Թուադիտութիւն համառօտ, 5. Գերական նախնական վերլուծութիւն, 6. Դպրութիւն կամ Նոր Գերականութիւն, 7. Անգլոթի Պետրոս, 8. Բարոյականը Պրոտարքեսայ (Բ. Հար.), 9. Բարոյականը Պրոտարքեսայ (Գ. Հար.):

Մասիս⁹ «Հայկազեան»ի Ազգին ըրած ծառայութիւնը «նշանաւոր» եւ «մեծ» որանալով՝ կ'ընէ որ 5 տարուան մէջ ան 35-700 հատոր (հատ, օրինակ) մեծ ու փոքր գրքեր ընծայած է Ազգին: Միայն 1862ին 14-200 գիրք տպած՝ 9161 գիրք ծախած է:

Մէմու. Հալ. ¹⁰ 1865ին դրուատէլէ վերջ «Հայկազեան»ի ազգօգուտ գործունէութիւնը կը շեշտէ որ ան 90-000 դրուշ գիրք տպած եւ արդէն 59-000 դրուշ ծախած է:

Ընկերութիւնը իր գոյութիւնը պահած է 24 տարուան երկար շրջան մը: 1883ին, չենք գիտէր ի՛նչ պատճառաւ, կը լուծուի ան եւ իր գրքերը կը բաժնէ: Ընկերութեան անդամները ժողով գումարելով՝ կ'որոշեն վեր-

⁸ Կ. Պ. 1863, էջ 69:
⁹ 1864, Թ. 628:
¹⁰ Թ. 612:

ջին մնացորդ 500 ոսկուց գումարը Ազգ. Հիւանդանոցին նուիրել¹¹:

2. ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1861)

Հաստատուած կ'ըսուի ի նպատակ տեղւոյն դպրոցին^{11*}, որուն մասին չենք գտած որեւէ ակնարկութիւն հնութեան մէջ:

3. ԳՊՐՈՑԱՍԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Յիշուած է Դոկա. Թորգոմեանէ¹², իրրեւ «Կարեւոր Ընկերութիւն», առանց որեւէ լուսարանութեան: Չենք հանդիպած հայ թերթերուն մէջ:

4. ԱՆՁՆՈՒՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (... 1867)

Ղալաթիոյ մէջ հիմնուած «Անճուէր Ընկերութեան» մէկ ճիւղը կազմուած է նաեւ Պէշիկթաշի մէջ՝ «անուս ազգայնոց դաստիարակութեան» համար¹³: Փոլսի մէջ նախապէս մը ասիկա գրելէ վերջ՝ կ'ընծայէ որ Ընկերութիւնը «հիմա ալ դադարման վիճակի մէջ կը գտնուի եւ պարտաւոր կ'ընեն ուսման համար հոն դիմողները»: Չըսեր սակայն թէ ե՞րբ եւ որմէ՞ հիմնուած էր ան. ո՞վ եւ ի՞նչ ուսում կ'աւանդէր հոն: Նամակագրին խօսքերէն այնպէս կը հասկցուի թէ Ընկերութիւնը 1867էն քանի մը տարի առաջ գոյութիւն ունեցած է Պէշիկթաշի մէջ: Հոն կ'ըսուի. «Անճուէր Ընկերութիւնը... դաստիարակութեան ծառայեց երբեմն շարունակ»: Նամակագիրը կը յորդորէ թաղին երկտասարկութիւնը որ «ազգասիրտարար բարեհաճին իրենց արդէն հաստատած Ընկերութեան գործն անընդհատ շարունակել»:

5. Ս. ԷՋՄԻԱՇՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1868)

Ա. Արգօյանէան¹⁴ կը գրէ. «Ս. Էջմիածնական Ընկերութիւն (1868) դպրոցի նպատակով Ընկերութիւն մը: Մանրամասնութիւնք կը պակսին»:

Բարեբախտութիւնը ունինք յայտնելու որ գտած ենք մանրամասն տեղեկութիւն Ըն-

¹¹ Հայրեմիմ, Կ. Պ. 1883, Թ. 1300: — Մասիս, 1883, Թ. 3459:
^{11*} Արեւիլի, Կ. Պ. 1898, Թ. 3854: — Գաղ. Տարեգ., Բ., էջ 83:
¹² Երեմիա Չէլչիլ, անդ՝ Բ., էջ 660:
¹³ Փոլսի, Կ. Պ. 1867, Թ. 183:
¹⁴ Գաղութան հայ Տարեգիրք, Պոլսի, 1940, էջ 88:

կերութեանս ոչ միայն ծագումի, այլ եւ իր կանոնադրութեան մասին:

Ընկերութեան չի կոչուիր «Ս. Էջմիածնական Ընկերութիւն», այլ՝ «Ս. Էջմիածնեան Ընկերութիւն»: Ահա՛ իր պատմութիւնը:

Մասիսի ուղղուած գրութեան մը մէջ՝ Խորէն Եպիսկոպոս (անշուշտ Նարայէյ), 1868 Յունիս 13ին կը պատմէ. «Պէշիկթաշի պատուարժան հասարակութիւնը Յունիս 2ին ընդհանուր ժողով կազմելով ընդ նախագահութեամբ մերով, միաբան հաւանութեամբ որոշեց որ Մաքրուհեան երկուս վարժարանը նախնական դպրոցի վիճակէն հանուելով՝ աւելի բարձրագոյն վիճակի փոխարկուի:

Այսպիսի փոփոխութիւն մը՝ հարկաւ վարժարանին ունեցած դոյզն եկամտին վրայ ալ փոփոխութիւն մը կը պահանջէր: Ընդհ. ժողովը ի նկատողութիւն առնելով զայն՝ որոշեց որ թաղիս մէջ Ընկերութիւն մը կազմուի, որոյ նպատակը լինի յօժարանուէր հանգանակութեամբ վարժարանին եկամուտն աւելցնել եւ ապագայն ապահովելու միջոցները մտածել: Եւ որպէս զի այս ազգօրուտ Ընկերութեան անդամակցութիւնը հասարակաց դիւրամբ բնաշխի լինի՝ որոշուեցաւ որ ամսական բաժինը 2 դահեկան լինի, եւ իւրաքանչիւր բարեսիրի յօժարութեանը թողուի ըստ իւրում կարողութեան եւ ազգասիրութեան մէկ բաժինէ աւելի գրուել: Միանգամայն Ընկերութեան նախնական կանոնները հաստատուեցան եւ Մասնաժողով մը կազմուեցաւ ծածուկ քուէարկութեամբ, որոյ ձեռքն յանձնուեցան Ընկերութեան շահուցն եւ յառաջադիմութեանը վրայ հսկելը: Եւ ըստ 12 Յօդուածոց կանոնաց Ընկերութեան՝ Մասնաժողովը ուխտեց առաջի պատուազուծար ժողովոյն որ ամբողջ տարի մը առանց հրաժարելու՝ յառաջ վարէ իւր պաշտօնը եւ ամենայն ջանիւք աշխատի ի հաստատութիւն եւ ի յառաջադիմութիւն Ընկերութեանն եւ ի յաջողութիւն ազգասիրական նպատակի նորուն:

Եւ այս անուանք են Մեծապատիւ անդամոց Մասնաժողովոյն.

- Ատենապետ՝ Պօղոս Աշնանեան
- Փոխատենապետ՝ Պօղոսիկ աղա Փափազեան
- Կնքապահ՝ Անտոն Էֆ. Պալեան
- Գանձապետ՝ Արթիւն Էֆ. Մաքսուտեան

- Համարակալ՝ Առաքել աղա Տիվիթեան
- Խորհրդականք՝ Գարրիէլ աղա Քէմհաճեան
- »՝ Ղազարոս աղա Ալէքսանեան

Արդ, ինչպէս կը տեսնէք... Յունիսի 2ը արժանի յիշատակաց օր մ'եղաւ Պէշիկթաշի համար... Եւ որովհետեւ նոյն օրը Ս. Էջմիածնայ կաթողիկէին տօնախմբութիւնն էր, ուստի եւ գեղեցիկ խորհրդով որոշեց ընդհանուր ժողովը որ նորակազմ Ընկերութեան անունն ալ լինի «Ս. Էջմիածնեան Ընկերութիւն», ի յիշատակ այն մեծահանդէս տօնին, որ ամէն Հայու սիրտ խորհրդաւոր զգացմամբ կը լեցնէ...¹⁵:

Մասիս հող կը հրատարակէ «Ս. Էջմիածնեան Ընկերութեան Հայոց ի Պէշիկթաշ» 12 կանոնները¹⁶, ուր կը բացատրուի թէ «Ս. Էջմիածնեան Ընկերութեան նպատակն է օգնական լինել Տնօրէնութեան Մ. (աբրուհեան) երկուս վարժարանին Պէշիկթաշի, անոր ամսական ծախուց բացը լեցնել ինքնաջօժար տրոց հանգանակութեամբ եւ բարոյական ամենայն նպաստ մատուցանել ի պայծառութիւն նորին»:

Ընկերութեան կենդանատեղին է Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյ դաւթին մէջ սենեակ մը (Կանոն Գ.). Մասնաժողովը ամսէ ամիս պիտի որոշէ նպաստի գումարը եւ վճարէ վարժարանին Տնօրէնութեան եւ ընդունի անկէ մուրհակ եւ ընկալազիր (Կանոն 8). Ընկերութիւնը Ս. Էջմիածնայ կաթողիկէի տօնին օրը պիտի քննէ Ընկերութեան վիճակը եւ Մաքրուհեան վարժարանին յառաջդիմութիւնը (Կանոն 10):

Ընկերութիւնը 1868 Նոյեմբերին ունէր 157 բաժանորդ՝ 761 բաժինով, որուն հինգ ամսուան գումարը կ'ընէ 7610 դուրուշ. բայց որովհետեւ ամէն բաժանորդ իր տուած խօսքը յարգած չէ՝ Մասնաժողովին ձեռքը հասած գումարն է 4722 դուրուշ, պահանջ ունենալով՝ 2888 դուրուշ:

Մասնաժողովը տպել տուած է բաժանորդներուն անունները՝ իւրաքանչիւր ամսոյն մէջ անվճար մնացած բաժինները նշանակելով¹⁷:

- ¹⁵ Մասիս, 1868, Թ. 853:
- ¹⁶ Տես նաեւ Օրագիր, 1868, Թ. 23:
- ¹⁷ Մասիս, 1868, Թ. 875:

6. ՍԱՆՈՒՑ ԱՆՁՆՈՒԻՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870)

Ընկերութեանս մասին մեր միակ աղբիւրը՝ Մամուլի մէկ տեղիքն է, ուր կը կարդանք. «Նախընթաց կիրակի օրը, Պէշիկթաշի Մաքրուհեան վարժարանին մէջ թաղեցի ուսումնասէր երիտասարդք հաւաքուեր են յիշեալ վարժարանին մէջ թէ՛ պանդուխտ եւ թէ՛ բնիկ ազգայնոց կիրակօրեայ դասախօսութիւն ընելու եւ այլեպէս գրքեր ու լրագիրներ հաւաքելով՝ Ընթերցարան մը հաստատելու համար Սանուց Անձնուէր Ընկերութիւն մը կազմելու¹⁸»:

7. ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870—1871)

Պոլսոյ Օրագիրէն¹⁹ կ'իմանանք թէ Պէշիկթաշի մէջ 1871ին Ընթերցարանաց Ընկերութիւն մը կար, որուն Գանձապետը «տարեդարձի շոգենաւ վարձած էր», Սահմանագրութեան (1860) տարեդարձը տօնելու համար: Հաւանական կը մնայ որ ան 1870—1871ի ընթացքին կազմուած ըլլայ:

Թէ՛ այս, թէ՛ նախորդը եւ թէ՛ «Հայրենասիրաց»ը անձանօթ են թորգոմեանի եւ Ալպօյաճեանի:

8. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1871)

Պէշիկթաշի մէջ 1871ի սկիզբը հիմնուած կ'երեւայ «Հայրենասիրաց Ընկերութիւն»ը, որ 1871ի Մայիսին կը գործէր «Կիլիկիոյ մէջ ազգային վարժարան մը հաստատելու նուիրակամ նպատակաւ»²⁰:

Ընկերութիւնը շոգենաւ մը վարձած էր թէ՛ Սահմանագրութեան տարեդարձը տօնելու եւ թէ՛ «Հայրենեաց Անձնուէր Ընկերութեան» նիւթական նպաստ մ'ապահովելու համար:

Նոյնանուն եւ նոյնանպատակ Ընկերութիւն մը հիմնուած է, 1871ին, նաեւ Գուգլուցնուֆի մէջ:

9. ԱՂՔԱՏԱՆՆԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Թորգոմեան²¹ Պէշիկթաշի մէջ կը յիշէ Աղբաւտախմամ կամ Բարեգործական անուանով Ընկերութիւն մը, որուն սակայն ոչ մէկ

- ¹⁸ Մամուլ, Կ. Պ. 1870, էջ 617, Մայիս 20:
- ¹⁹ 1872, Թ. 835:
- ²⁰ Մամուլ, 1871, էջ 351:
- ²¹ Երեմ. Զէլէպ., Բ., էջ 660:

պարագան ծանօթ է: Կ'երեւի այս ալ ասուով մը պէս երեւցած՝ եւ առանց հետք մը ձգելու մարած է:

10. ԲԱՆՏԱՊԱՐԳԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1873)

Բաժանորդական Ընկերութիւն մ'է «Բախտապարգեւ Ընկերութիւն»ը, հաստատուած հաւանօրէն 1873ի վերջերը: Ընկերութեան Մասնաժողովի կողմէ Ռուբէն Զիլինկիրեան 1874 Ապրիլ 7 թուականով նամակի մը մէջ կը գրէ. «Մեծարգոյ ընկեր Բախտապարգեւ Ընկերութեան Պէշիկթաշու. Ընկերութեանս մեծամասնութիւնը իր վերջին անգամ ստորագրած Մարտ 18 թուականաւ հանրագրով կը խնդրէր Մասնաժողովէս որ անցեալ քուէարկութեան Ընկերութեան թղթերը իր անուան մնալէն հետք ժողով գումարէ եւ իր վերջնական որոշումը ընդհանուրին յայտնէ»²²:

Ուրիշ ոչ մէկ ակնարկութեան հանդէպ չենք Ընկերութեանս մասին, որուն անունը անձանօթ է թորգոմեանի եւ Ալպօյաճեանի:

11. ԵՂՐԱՅՐԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

Առանց անդրադոյն լուսարանութեան՝ լոկ անունով կը յիշէ Փունջ²³ Պէշիկթաշի «Եղրաչրասիրաց Ընկերութիւն»ը, որ 1874 Մայիսին — Սահմանագրութիւնը տօնախմբելու համար — նաւ վարձած է Պէշիկթաշի իսկէ լիսիի դաշտավայրը փոխադրելու համար ժողովուրդը:

Անձանօթ է թորգոմեանի եւ Ալպօյաճեանի:

12. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ՕԺԱՆԻԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Արարատեան Ընկերութեան վարչութիւնը 1879 Սեպտ. 27ին կը գրէ. «Արարատեան Ընկերութիւնը գոհութեամբ կը հաղորդէ արգոյ հասարակութեաննոր Ընկերութեան մը կազմութիւնն ի Պէշիկթաշ «Ուսումնասիրաց Օժանդակ» անուամբ, որոյ նպատակն է նպաստել Հայաստանի դպրոցաց զարգացման եւ որ իբր առաջին երախայրիք իւր վաստա-

- ²² Փունջ, 1874, Թ. 878:
- ²³ Անլ., Թ. 887:

կոց՝ Արարատեան վարժապետանոցի նուիրեց 113 Քրանքի արժողութեամբ գրքեր...»²⁴ :

Երկրայի «Մեծն Ներսէս» զիշերօթիկ վարժարանի տնօրէնութիւնն եւս շնորհակալութիւն կը յայտնէ «Պէշիկթաշի Ուսումնասիրաց Ընկերութեան», որ վարժարանին 73 կտոր դասագիրք նուիրած է²⁵ :

1880ին Հմայեակ Վ. Դիմաքսեան Երզնկայէն շնորհակալ կ'ըլլայ Ուսումնասիրաց Օժանդակ Ընկերութեան, որ Երկրայի Պօղոս Տմարեանի միջոցաւ Երզնկայի վարժարանին 70 հատ զանազան դասագիրք նուիրած է²⁶ :

13. ԳՐԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1884)

Ա. Ալպոյաճեան²⁷ կը համարի թէ 1884ին Պէշիկթաշի մէջ հիմնուած է «Գրասիրաց Ընկերութիւն» մը, որուն մասին ուրիշ բան չի հաղորդեր: Տեղեկութիւն մը չենք դտած մենք ալ այս մասին:

14. ՄԱՌՐՈՒՀԵԱՆ ՌԻՍՈՒՄԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1886)

1887 Մարտ 30ին Ընկերութեան Գործադիր Ժողովի Ատենապետը՝ Յ. Գ. Կիւմրեան եւ Ատենադպիրը՝ Միհրան Ն. Կէվրէկեան Պէշիկթաշին կը գրեն. «Թագիս մէջ հազիւ մէկ տարիէ ի վեր գոյութիւն ունեցող Մաքրուհեան Ուսումնասիրաց Ընկերութիւնը, որ ըստ իւր նպատակին այժմ 10 աղքատ եւ ուշիմ պատանիներ կը խնամէ, շարքականգն վնասներով, գրական եւ նիւթական պիտոյքն հաշարայքներով եւ դարմաններով գայնս ի հիւանդութեան»²⁸ :

Մշակութային գեանի վրայ բարեգործական Ընկերութիւն մըն է, հետեւաբար, Պէշիկթաշի «Մաքրուհեան Ուսումնասիրաց»ը, որ հիմնուած է 1886 Յունիս 15ին, ինչպէս կը տեսնուի Ընկերութեան Բ. Տարեշրջանի առթիւ հրատարակուած «Միամեայ Տեղեկագիր»էն²⁹ :

Ընկերութիւնը 1887ի սկիզբը ունեցած է 179 բաժանորդ (անդամ)՝ 1888ին սկիզբը կը

հոգար 15 երկուս աշակերտի բոլոր պիտոյքները. մէկ տարուան մուտքն եղած է 13,332.50 դրուշ³⁰ :

1888ին Ընկերութեան Գործադիր Ժողովը կը կազմէին.

- Արտաշէս Կ. Բէժմիւրճեան (Ատենադպիր)
- Մէլիք Պէշիքճեան (Ատենապետ)
- Գրիգոր Բիւրճեան (Համարակալ)
- Յր. Պ. Կիւմրեան (Գանձապետ)
- Վահան Թէրզեան (Մատակարար)
- Իսկ Վարչական Խորհուրդը՝ հետեւեալները.
- Վ. Յ. Մարգարեան (Ատենապետ)
- Ս. Յ. Բրավատայեան (Ատենադպիր)³¹

Ընկերութեան այդ Տեղեկագիրը կը բովանդակէ նաեւ Ընկերութեան անդամներու անուանացանկը³² :

Ընկերութեան հիմնադրութեան եւ նպատակի մասին 1914ի Տարեցոյցին մէջ սա կարեւոր տողերը կը գտնենք. «Տրդատ Պէշ Պալեան... կազմած է Մաքրուհեան Ուսումնասիրաց Ընկերութիւնը, նպատակ ունենալով աղքատ աշակերտաց գրեական պէտքերն հոգալ եւ կարօտ շրջանաւարտներու բարձրագոյն վարժարաններու մէջ պաշտպանութիւն ստանձնել»³³ :

15. ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐՄԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Տրդատ Պէշ Պալեան իր եղբոր՝ Վահրամ Պէշի հետ հիմնած է «Կրթական Մարմնամարզի Ընկերութիւն» մը³⁴, հաւանօրէն Պէշիկթաշի մէջ եւ 1886—1890ի միջոցներուն:

16. ՄԻՈՒԹԻՒՆ «ՆՈՐԷՆ ՆԱՐՊԷՅ» (1908)

1908ին կազմուած երիտասարդական այս Միութիւնը ունեցած է Լաւրան-Ընթերցարան մը Մաքրուհեան վարժարանին մէջ³⁵ :

³⁰ Տեղեկագիր, անդ՝ էջ 2—4. Հմմտ. Հաշուեկէն, անդ՝ ետեւը:
³¹ Տեղեկագիր, անդ՝ էջ 10—11:
³² Անդ՝ էջ 12—16:
³³ Տարեցոյց 1914, Կ. Պ., էջ 70:
³⁴ Անդ:
³⁵ Ժամանակ, Կ. Պ. 1908, Թ. 40: — 1912, Թ. 1190:

²⁴ Մասիս, 1879, Թ. 2436:
²⁵ Անդ՝ Թ. 2473:
²⁶ Անդ՝ 1880, Թ. 2568:
²⁷ Գաղ. Տարեգ., Գ., էջ 121:
²⁸ Արեւելիք, Կ. Պ. 1887, Թ. 961:
²⁹ Կ. Պ. 1888:

17. ՄԱՌՐՈՒՀԻ ՊԱԼԵԱՆ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՏԻԿՆՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1912)

Սարգիս Պէշ Պալեանի Տիկինը՝ Մաքրուհի՝ վաղամեռիկ եղած է: Իր յեշատակը յաւերժացուցած են՝ թողած ստացուածքով Պէշիկթաշի մէջ իր անուան ձօնուած «Մաքրուհեան վարժարան»ը հիմնելով:

Արդ, Մաքրուհի Պալեանի յեշատակին կը նուիրեն, Պէշիկթաշի հայ Տիկինները, նաեւ 1912ին իրենցմէ հաստատուած «Մաքրուհի Պալեան Կրթասիրաց Տիկիներու Ընկերութիւն»ը: Առիթ չենք ունեցած տեսնելու Ընկերութեան «Հիմնական Կանոնները», որոնց առաջին Յօդուածը կ'ըսէ. «Մաքրուհի Պալեան Կրթասիրաց Ընկերութեան նպատակն է՝ բարոյական կապ մը հաստատել քաղիկ իգական սեռին մէջ եւ օգնել վարժարանին կարօտ աշակերտներուն»³⁶ :

Ընկերութեան հրաւերով խօսած ճառի մը մէջ, Տիկին Հայկանոյ Մառք, վեր հանելով Ընկերութեան բնորոշ գիծը եւ օգտակար գործը՝ կը շեշտէր. «Պատիւ այն կիներուն, որոնք կրցած են... իտէպի մը շուրջը բոլորուիլ, ոյժ մը ստեղծել, ինքնարօղի, եռանդալին ու կորովի ոյժ մը, որ միտքէն կը ծնի, որ սրտէն կը նուիրագործուի եւ դործադրութեամբ կ'անմահանայ: Մաքրուհի Պալեան Տիկինանց Ընկերութիւնը մէկն է այն նուիրեալներէն, որ համեստօրէն կու գայ իր աշխատող բազուկները միացնել նմանօրինակ Ընկերութիւններու, եւ իրեն համար ու իր սահմանին մէջ իր օգտակարութիւնն ու ծառայութիւնը մատուցանել, բոլոր բարեբաւութիւններուն մէջէն գերընտրելով ամէնէն նուիրականն ու ամէնէն վայելայելին. — Այն է՝ Միութեան ու դաստիարակութեան գործը»³⁷ :

Ընկերութիւնը բաւական թուով աղքատ սաներու եւ սանուհիներու հազուստ հոգացած է կարճ ատենուան մէջ³⁸: Գործած է մինչեւ արհաւիրքի թուականը (1915):

18. ՀԱՅ ՈՐԲԱՆՆԱՍԻ ՕԺԱՆՊԱԿ ՏԻԿՆԱՆՅ ԵՒ ՕՐԻՈՐԳԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

1918ին Պէշիկթաշի մէջ նախ կազմուած էր «Որբահնամ Մարմին» մը՝ նոյն տարուայ Նոյեմբեր 29ին վերածուելով «Հայ Որբա-

³⁶ Փեքակ, Կ. Պ. 1913, Թ. 1—2, էջ 144:
³⁷ Փեքակ, անդ՝ էջ 146—147:
³⁸ Ժամանակ, 1913, Թ. 1326:

խնամի Օժանդակ Տիկնանց եւ Օրիորդաց Միութեան³⁹», որ կ'ունենայ հետեւեալ վարչական կազմը.

- Տիկ. Եւգինէ Աւագեան Ա. Ատենապետ
- Տիկ. Ատրինէ Գալայճեան Բ. Ատենապետ
- Տիկ. Յօրթիւնէ Կարապետ Գանձապետ
- Օր. Աստղիկ Իգնատիոսեան Ատենադպիր
- Օր. Մելինէ Աբիսեան Օժանդակ Անդամ
- Օր. Ազնիւ Պարտիզպանեան Օժանդակ Անդամ
- Տիկ. Միւնիվէր Ունճեան Օժանդակ Անդամ⁴⁰

Ընկերութիւնը մեծապէս օգտակար եղած է յորբերու եւ տարագրեալներու տառապանքը մեղմացնելու համար: Գործած է գոնէ մինչեւ 1922:

19. ՀԱՅ ԻՐԱՆԱԳԷՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Կոչուած է նաեւ «Հայ փաստաբաններու Միութիւն»⁴¹: Հաւաքատեղին էր Բերա, որ 1918—1922 կենդանաւայրն եղած էր հայ մշակութային անօրինակ ետուն կեանքի մը, վերածնած՝ 1914—1918ի մահաբոյր շրջանէն անմիջապէս վերջ:

Հայ Իրաւագէտներու Միութիւնը նպատակ ունէր գրաւուած հայ վանքերու, եկեղեցիներու եւ զանազան հաստատութիւններու յանձնումը ապահովել եւ անոր օրինական ձեւը պաշտպանել⁴²:

Միութիւնը իր վերջնական կազմը 1919ին կը ստանայ, հետեւեալ կերպով.

- Մայր Դիւան
- Ս. Գարեան Ա. Ատենապետ
- Շ. Գալանճեան Բ. Ատենապետ
- Լ. Ներսէսեան Ա. Ատենադպիր
- Ա. Պօղոսեան Բ. Ատենադպիր
- Վարչական Ժողով
- Չայլաբ
- Յ. Պիւքիւճեան
- Ա. Ժիւմպիւշեան
- Չ. Գուլումճեան

³⁹ Անդ, 1918, Թ. 3369:
⁴⁰ Անդ, Թ. 3371:
⁴¹ Անդ, Թ. 3380:
⁴² Անդ, Թ. 3384:

- Ն. Աստուրեան
- Գ. Գայսէրլեան
- Ն. Տիարեան⁴³

Միութիւնը 1919ին կը հրատարակէ «Իրաւունք» Պարբերականը⁴⁴, որ միայն 4 թիւ կրնայ լոյս տեսնել:

«Հայ Իրաւագէտներու Միութիւն»ը 1920ին կը միանայ «Հայ Երիտասարդ Իրաւագիտաց Ակումբ»ին հետ⁴⁵, որ զատ Միութիւն մ'էր: Այս միութենէն վերջ կը հրատարակուի յատուկ «Օճկան» մը՝ «Օրէնք» անունով⁴⁶:

20. «ԿԱՄՔ» ՕՐԻՈՐԴԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Երիտասարդական Միութիւն մըն է Պէշիկթաշի «Կամք»ը, զոր կը յիշեն ժամանակ⁴⁷ եւ թէոզիկ⁴⁵, առանց մանրամասնութեանց:

21. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1922)

Հիմնուած 1922 Մարտին: Նպատակ. «Օրէնքներ խումբ մը կազմել եւ անդամներուն երաժշտական զարգացումին զարկ տալ»:

Դիւանի կազմը.	
Կարապետ Համբարեան	Ատենապետ
Լեւոն Թիւթիկեան	Ատենադպիր
Վարչութիւնը.	
Մատթ Լուսինեան	Ատենապետ
Օր. Չանբրեան	Ատենադպիր
Տիրան Զիթեան	Գանձապահ
Օր. Ա. Յակոբեան	Խորհրդական
Ա. Տէտէան	Խորհրդական

(Ժողովուրդի Չայնը, 1922, թ. 1061):

(Շարունակելի:) Կ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

⁴² Անդ, թ. 3552:
⁴⁴ Անդ, թ. 3666:
⁴⁵ Անդ, 1920, թ. 3784:
⁴⁶ Ժողովուրդի Չայնը, Կ. Պ. 1921, թ. 842:
⁴⁷ 1919, թ. 3572:
⁴⁸ Ամէն. Տարեց. 1921, էջ 308:

Հ Ե Յ Վ Ա Կ Ե Ն Ք

1. ՓԱՂԵՐԱՅ. Վարդապետ, բարունապետ: Բառս Հ. Աճառեանի ծանօթ է միայն Երեմիայի Բառազրբէն «փաղերեայ» գրչութեամբ: Երեւան կու գայ մասնաւորապէս ժէ. դարուն Բաղէշի Դպրոցի աշակերտներու քով իրրեւ եկեղեցական տիտղոս մեծ վարդապետի կամ արքեպիսկոպոսի: Աճառեան չէ ստուգարանած: Ինձ կը թուի թէ թարգմանութիւնն է յն. սոււ-թըս, collègue dans les fonctions de prêtre ou de grand-prêtre, որուն իդական ձեւն է συνιέρεια, այն է երիցակից. հոս սոււ-վերածուած է փաղ-, արթս էր-այ. այ կը համարիմ նմանութեամբ փիլիսոփայ, քահանայ, արեղայ վերջաւորութիւններու. եր կարող է նկատուիլ եր-էց կամ յեր-, յունական արմատէն հմմտ. Յերա-պոլիս:

2. ՏԵԼԵՏԻ, Նոնոսի թարգմանիչը տառադարձած է քառիցս տեղիտ. «կրօնից եւ հաճութեան Աստուծոյ տեղիտս կատարել եւ միւստերիտս հաստատել» (էջ 11 հրտ. Մանանդեանի): Ասիէ ծագած է Գր. Մազիստրոսի տեղիտիսը, յն. թէ՛ տելետի եւ թէ՛ տելեւոտէ՛ Բիւզանդական շրջանին գործածուած է իրրեւ տիտղոս բարձրագոյն եկեղեցականներու: Ժէ. դարուն նոյն Բաղէշի Դպրոցի աշակերտները սիրած են կիրարկել զայն տեղիտ ձեւով: Կ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ, Գրչանկարներ Պարտիզակ գիւղին: Փարիզ 1950, էջ 720:

Տարիներ յառաջ Գր. Յ. Միւսիկեան լոյս ընծայած էր «Պարտիզակն ու Պարտիզակցի» (Գահիրէ, 1938, էջ 983, ուր էջ 823—983՝ «Պարտիզակցիներու Բառարանը»): Այժմ տարիներ յետոյ Վեր. Ա. Ա. Պետիկեանի առաջիկայ գրութիւնը կու գայ զայն կատարելագործելու եւ ամբողջացնելու: Բայց կանխեմ ըսելու՝ որ այս հրատարակութիւնը աւելի պիտի գնահատուէր եթէ նկատի առնուած ըլլային Պարտիզակի մանրամասն տեղագրութիւնն ու հայ գաղութի պատմութիւնն եւ լեզուն: Սակայն նպատակն եղած է երբեմնի քաղցր տպաւորութիւններու եւ յուշերու վերջիչումն ու ամփոփումը, եւ յարբերութեամբ նոյներու հեղինակը, թէեւ ցանցառ, կը ցանէ քաղաքական, բարոյական եւ կրօնական տեսութիւններ, որոնցմէ մաս մը հաճելի է եւ մաս մըն ալ վիճելի եւ նաեւ

անընդունելի: Ամբողջ գրութիւնը հետաքրքրութեամբ եւ սիրով կը կարդացուի, զի կարելի է մասնաւորապէս լիակատար ծանօթութիւններ քաղել Հայուն կեանքին ու սովորութիւններու նկատմամբ: Ստուգիւ տիտղոսին համապատասխան է բովանդակութիւնը, որուն վրայ գաղափար կազմելու համար, յիշենք քանի մը գլուխներ ու խորագիրներ՝ Պարտիզակ գիւղը (էջ 17), Սեւ հաց (էջ 23), Չարչուն (էջ 71), Օվան (էջ 77), Չաղաքցի ճամբան (էջ 120), Աղբուրին գլուխը (էջ 152), Տօլ ու տաշտ (էջ 159), Չուր եւ դեղ (էջ 172), Վանքը (էջ 179), Ժամուն գանգաղը (էջ 187), Սըլի Մինաս աղան, ինքնայատուկ նկարագիր մը, Առաքեալ եւ Արուսեակ (էջ 235), Ճաթ, Տօնկալի Ս. Սարգիսը — Լագերը, Տուտուն — Մատուռը (էջ 249), Աքաղաղը (էջ 271), Մանարանը (էջ 334), Գեղին հաւատքն ու կրօնքը (էջ 364), Գիւղին երգող հոգին (էջ 354), Գիւղին քաջերը, Պաղտասար Ափօ (էջ 385), Գեղին կնիկ մարդիկը (էջ 401), Հողը (էջ 409), Մանկրթիւն (էջ 468), Դպրոցը (էջ 545—720, պէսպէս դրուագներով աւելցուն): Նկարներ են ասոնք եւ ուրիշներ, որոնք շարան շարան կը ներկայանան ճարպիկ վրձինի յաջող գծերով եւ սրտազրաւ երանդներով: Խնամուած ոճը եւ գեղեցիկ լեզուն արժէք ու թովանք կը ստանան, երբ գիւղին բարբառովն ու աստութիւններով կը համեմուն եւ այսպէս՝ Պարտիզակի բառազանձէն ու քերականութենէն նշխարներ կը կտակուին ապագայ սերունդին եւ ատաղձ կը մատակարարուի լեզուի ուսումնասիրութեան:

Պարտիզակը, որ հայ ազգին տուած է այնքան նշանաւոր դէմքեր¹, կրնայ հպարտ ըլլալ, որ ունեցած է կարող Չաւակ մը, որ հայաշատ գիւղը կրցած է նկարել իր հարազատութեամբը եւ այն սիրող սրտով:

Այդ ստուար հատորը բով մըն է հայ ազգագրութեան եւ նկարագրի ուսումնասիրութեան համար եւ յուշարձանը գիւղի մը, որուն մէջ «Ոչ մէկ հետք մնացած է հին, բարի օրերէն» (Յուսարբ, 1952, թ. 93):

Կ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

¹ Նաեւ՝ նահատակ մը, հմմտ. Կ. քհ. Գրիգորեան, Վկայարանութիւն Յովհաննու Պարտիզակցու եւ պատմութիւն հիմնարկութեան Պարտիզակի եւ չիւթեան եկեղեցու եւ վարժարանի, Երուսաղէմ 1933, զբախտական մը Հ. Ն. Ակիւնեանէ, հմմտ. Հանդ. Ամսօրեայ 1933, էջ 736:

ՀԱՅՏԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄԸ ՄԻՒՆԵՏԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ: Մասնաւոր նամակ մը առնելով կու տանք հետեւեալ տեղեկութիւնները:

1951 թ. ամարային կիսամեակէն սկսեալ Հայոց լեզուն կը դասախօսուի Միւնխէնի համալսարանի փիլիսոփայական մասնաճիւղին մէջ: Այդ նպատակով Բաւարիոյ Կրթական Նախարարութիւնը դասախօս հրաւիրած է Դոկտ. Ա. Արեղեան, որ երկար տարիներ նոյն այդ պաշտօնը կատարած է Բերլինի համալսարանին կից Արեւելեան լեզուաց ձեւմարանին եւ նոյն համալսարանի փիլիսոփայական մասնաճիւղին մէջ:

Հայերէնի համար Բաւարիոյ Կրթական Նախարարութեան կողմէ յատկացուած են շարաթական չորս պահ: Կ'աւանդուին գրարար եւ աշխարհարար: Առաջինին համար որպէս ուղեցոյց եւ օժանդակ ձեռնարկ կը գործածուին Մէյքի Գրարարի քերականութիւնը (յօրինուած գերման, լեզուով) եւ Հ. Թոնեանի «Հատընտիր Ընթերցուածք»ը, այլեւ առանձին մատենագիրներ: Աշխարհարարի համար՝ Դոկտ. Ա. Արեղեանի «Նոր հայերէնի քերականութիւն»ը (յօրինուած գերման. լեզուով) եւ վերջնոյս մաս կազմող «Ընթերցանութեան հատուածներ»ը (արեւելահայ եւ արեւմտահայ հեղինակներ):

Անցեալ երեք կիսամեակներուն հայերէն դասընթացներուն հետեւած են.

1. Պրոֆ. Վիլհելմ Հենդառներերգ, ուսուցչապետ արեւելեան քրիստոնեայ ժողովրդոց բանասիրութեան Միւնխէնի համալսարանին մէջ:
2. Դոկտ. Իւլիուս Ասֆալդ, որ կը պատրաստուի ուսուցչապետութեան պաշտօնի՝ նոյն լեզուներու եւ բանասիրութեան համար:
3. Դոկտ. Հելմութ Հուսարախ, դասախօս դասական լեզուներու:
4. Դոկտ. Բաուէր, պաշտօնեայ Բաւարիոյ պետական մատենադարանին:
5. Դոկտ. Դոմկէ, թարգման եւ պետական պաշտօնեայ:
6. Աստուածարանութեան ուսանող Բին, որ կը պատրաստուի հոգեւոր ասպարէզին համար:
7. Ուսանող Բեխերտ եւ
8. Ուսանող Այլս: Վերջիններս կը պատրաստուին հնդեւրոպական լեզուներու ուսուցչապետութեան պաշտօնի համար: